ԵՎՐՈՊԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 1914 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Մ. Ե.

1912 թ. աշնանից Հայկական հարցը կրկին դարձել էր միջազգային դիվանագիտության քննարկման առարկա: Ելնելով իր պետական, քաղաքական և տնտեսական շահերից՝ Ռուսաստանը հանդես եկավ որպես Հայկական հարցի նախաձեռնող: Ամբողջ 1913 թ. ընթացքում ռուսական դիվանագիտությունը ջանք չխնայեց հայկական բարենորոգումների իր հեղինակած նախագիծը տերությունների և թուրքական կառավարության համար ընդունելի դարձնելու համար: Այդ նախագծում երիտթուրքերի համար ամենաանընդունելին եվրոպական վերահսկողության այն տարբերակն էր, որ առաջարկում էր ռուսական կողմը: Իսկ ռուսական նախագիծն ընդամենը առաջարկում էր հայկական մարզի գործադիր իշխանությունը հանձնել գեներալ-նահանգապետին (վալի ումումի), որը պետք է լիներ օսմանահպատակ քրիստոնյա կամ եվրոպացի, նշանակված սուլ-թանի կողմից՝ տերությունների համաձայնությամբ: Բարենորոգումների իրականացման վերահսկողությունը դրվելու էր մեծ տերությունների վրա[1]:

Եվրոպական վերահսկողության հաստատման հարցում ռուսաց դիվանագիտությունն անդրդվելի մնաց նաև հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-գերմանական բանակցությունների ժամանակ: 1913 թ. սեպտեմբերի 10-ին Կ. Պոլսի ռուսական դեսպան Գիրսը և գերմանական դեսպան Վանգենհայմը համաձայնության եկան հայկական բարենորոգումների՝ վեց կետից բաղկացած ծրագրի շուրջ: Այս համաձայնությամբ, ռուսական կողմը համակերպվել էր մեկ միասնական նահանգը երկու սեկտորների տրոհելու թուրքական առաջարկի հետ, բայց սեկտորների գլխավոր տեսուչները նշանակվելու էին տերությունների համաձայնությամբ: Բարենորոգումների գործադրման վերահսկողությունն իրականացվում էր տերությունների՝ ինչպես Կ. Պոլսի դեսպանների, այնպես էլ սեկտորների տեղական հյուպատոսների միջոցով[2]:

Հայկական միասնական նահանգի տրոհման ամբողջ պատասխանատվությունն ընկնում էր գերմանական կառավարության վրա, որի դիրքորոշումը իթթիհատականների համար դարձել էր ռուսական առաջարկներին դիմադրելու աղբյուր: 1914 թ. մայիսի 10-ին IV պետական դումա-յում կադետական կուսակցության առաջնորդ Պ. Միլյուկովը հայտարարեց. «Գերմանիան մեզ հարկադրեց նշանակալիորեն վատթարացնել հայկական վիլայեթների կառուցվածքի այն սկզբնական նախագիծը, որի մասին մենք պնդում էինք հայ ժողովրդի համաձայնությամբ: Գերմա

---

[1] *Сборник дипломатических документов. Реформы в Армении* (այսուհետև՝ *Ре-формы в Армении), Петроград, 1915, с. 61-69.*

[2] Նույն տեղում, էջ 93-94:

նիան մեզ ստիպեց մեր նախատեսած հայկական միասնական մարզը բաժանել երկու մասի և վեց վիլայեթներին կցել յոթերորդը, հենց այն պատճառով, որ այդ յոթերորդի թուրքական բնակչությունն առավելություն էր տալիս օտտոմանյան տարրին»[3]:

Ինչ վերաբերում է բարենորոգումների գործադրման նկատմամբ եվրոպական վերահսկողության ձևերին, ապա պետք է ասել, որ այս հարցում սեպտեմբերի 10-ի ռուս-գերմանական համաձայնությունը մի քայլ առաջ էր ինչպես Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի, այնպես էլ տերությունների 1895 թ. մայիսյան ծրագրի համեմատ: Երկու սեկտորների ստեղծումից հետո առանձնակի կարևորություն էր ստանում ծրագրի նախատեսած այն հսկողությունը, որն իրականացնելու էին տեղական հյուպատոսները: Պատմական փորձը ցույց էր տալիս, որ Կ. Պոլսի դեսպանների հսկողությունը կրում էր ձևական բնույթ, քանի որ, գտնվելով հայկական վիլայեթներից հեռու և չունենալով տեղական իշխանությունների վրա արդյունավետորեն ազդելու հնարավորություններ, այն տեղիք էր տալիս անվերջ ձգձգումների ու քաշքշուկների: Ռուսական նախագծում դեռ կարելի էր հաշտվել դեսպանների կողմից իրագործվող հսկողության հետ, քանի որ հայկական նահանգների ամբողջ գործադիր իշխանությունը իրականացնելու էր Բ. Դռան կամայականություններից ազատ գեներալ-նահանգապետը, որը լինելով Եվրոպայի դրածո՝ պատասխանատու էր միայն նրա առաջ: Այնինչ ռուսգերմանական համաձայնությամբ նախատեսվող երկու գլխավոր տեսուչները, Բ. Դռնից ունեցած կախվածության պատճառով, ենթակա էին Կ. Պոլսում ծվարած թուրք փաշաների քմահաճույքներին: Հետևաբար, տեղական հյուպատոսների կողմից իրականացվող հսկողությունը տվյալ դեպքում ամենագործնական ձևն էր, որը կարող էր իրապես ապահովել բարենորոգումների արագ գործադրումը՝ առանց պաշտոնական քաշքշուկների[4]:

Թուրքական կառավարությունը քաջ գիտակցում էր, որ հայկական բարենորոգումներում գլխավորը եվրոպական վերահսկողությունն է, քա-նի որ դրա բացակայությունն իրեն հնարավորություն կտար չիրագործել բարենորոգումները: 1913 թ. հոկտեմբերի 13-ին ռուսական դեսպան Մ. Գիրսի և վարչապետ Սայիդ Հալիմ փաշայի հանդիպման ժամանակ պարզվեց, որ թուրքական կառավարությունը երկու հայկական սեկտորների համար պահանջում էր ոչ թե եվրոպացի գլխավոր տեսուչներ, այլ խորհրդականներ թուրք տեսուչների համար: Թուրքական կառավարության ղեկավարը համառորեն պնդում էր, որ ինքը չի կարող ընդունել Եվրոպայի մասնակցությունը գլխավոր տեսուչների նշանակման խնդրում: Նա համաձայն էր ընդունել եվրոպացի խորհրդականներին՝ տասը տարով, այն էլ պայմանով, որ Բ. Դուռը դիմի ոչ թե բոլոր մեծ տերություններին, այլ նրանցից միայն մեկին[5]: Կասկած չկար, որ այդ տերությունը լինելու էր Եռյակ դաշինքի երկրներից որևէ մեկը:

---

[3] *Россия. Государственная Дума. Стенографические отчеты 1914 г. Четвертый созыв. Сессия вторая, ч. IV, СПб., 1914, с. 365-366.*

[4] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 22:

[5] *Реформы в Армении, с. 99-101.*

Եվրոպական վերահսկողությունից հրաժարվելու դիմաց ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան դեսպան Գիրսին խոստանում էր Թրակիայում գտնվող թուրքական զորամասերից ընտրել յոթ հազար պարտաճանաչ զինվորներ և նրանցով համալրել երկու սեկտորների ժանդարմերիան[6]:

Եվրոպական վերահսկողությունից խուսափելու նպատակով, թուրքական կառավարությունը փորձեց բանակցությունների մեջ մտնել Կ. Պոլսի հայ հասարակական շրջանների հետ: Իթթիհատի պարագլուխներ Թալեաթը, Խալիլը պարբերաբար դիմում էին նորընտիր պատրիարք Զավեն Տեր-Եղիայանին՝ համոզելով հրաժարվել եվրոպական վերահսկողությունից: Թալեաթը նոյեմբերի վերջին, իր մոտ հրավիրելով պատրիարքարանի ներկայացուցիչներին, խոստանում էր խորհրդարանում հայ պատգամավորների թիվը տասներկուսից հասցնել տասնութի[7]: Սայիդ Հալիմ փաշան դեկտեմբերի 16-ին հատուկ հեռագրով դիմեց Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային՝ առաջարկելով գալ Կ. Պոլիս և թուրքական կառավարության հետ բանակցություններ սկսել հայկական բարենորոգումների վերաբերյալ[8]:

Միաժամանակ, իթթիհատականները դիմեցին սպառնալիքների: 1913 թ. դեկտեմբերին Կ.Պոլսի նահանգապետ Ջեմալ փաշան, իր մոտ կանչելով խորհրդարանի պատգամավոր դաշնակցական Վարդգես Սերենկյուլյանին, ասաց. «Եթե Դուք պնդեք եվրոպական քոնթրոլի մասին, մենք ստիպված պիտի լինենք ընդունել, բայց ատոր արդյունքը այն կ'ըլլա որ այդ վեց վիլայեթներուն իսլամ ազգաբնակչությունը ոտքի պիտի ելլե, և 3-4 հարյուր հազար հայեր պիտի կոտորվին»[9]: Թալեաթը Զավեն պատրիարքին ուղղակի ապառնում էր. «Եվրոպացիները շուտով կհեռանան, և թուրքերը մենակ կմնան հայերի հետ: Թող հայերը դա չմոռանան»[10]: Թուրքական մամուլը սկսեց հակահայկական ուժեղ քարոզարշավ: Թերթերը տպագրում էին հայերի դեմ սպառնալիքներով լեցուն հոդվածներ, որոնք հրապարակայնորեն պահանջում էին հրաժարվել եվրոպական վերահսկողությունից: Թուրքական տեղական իշխանությունները մահմեդական բնակչությանն արհեստականորեն գրգռում էին հայերի դեմ: Գումարվում էին գաղտնի ժողովներ, մոլլաները մզկիթներում, մահմեդական մոլեռանդություն բորբոքելով, քարոզում էին պատժել անհավատ հայերին: 1913 թ. դեկտեմբերի 29-ին Էրզրումի ռուսական հյուպատոս Ադամովը հեռագրում է. «Իթթիհատ կուսակցության անդամները ստորագրություններ են հավաքում վերահսկողության դեմ ուղղված բողոքագրի տակ, նախօրոք տերությունների վրա գցելով կոտո-

---

[6] Նույն տեղում, էջ 102:

[7] *Русское слово, 23.XI.1913.*

[8] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 61:

[9] **Արմեն Գարո,** Ապրված օրեր, Քալիֆորնիա, 1990, էջ 134:

[10] *Архив внешней политики Российской империи* (այսուհետև՝ *АВПРИ), ф. По-литархив 1914 г., оп. 482, д. 3472, л. 62.*

ռածի մեղքը՝ բարենորոգումների գործում նրանց միջամտության դեպքում»[11]:

Հաշվի առնելով ստեղծված կացության բարդությունը՝ 1913 թ. հոկտեմբերի 20-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովը Մ. Գիրսին հեռագրեց՝ ընդունել տեսուչների փոխարեն եվրոպացի խորհրդական նշանակելու թուրքական առաջարկը, սակայն պայմանով, որ տեսուչների իշխանությունը լինի անվանական, իսկ իրական իշխանությունը պատկանի տերությունների նշանակած եվրոպացի խորհրդականներին: «Մենք,- գրում էր Ս. Սազոնովը,- կարող ենք գնալ զիջումների՝ ըստ ձևի, բայց ոչ ըստ էության»[12]:

Գլխավոր տեսուչների փոխարեն խորհրդականներ նշանակելու ռուսական դիվանագիտության առաջարկը հարկադրական քայլ էր և պայմանավորված էր երիտթուրքերի համառ դիմադրությամբ: Այսուհանդերձ, ռուսական կողմը ձգտում էր եվրոպացի խորհրդականներին շնորհել այնպիսի լիազորություններ, որոնց առկայությամբ նրանք կկարողանային հսկել բարենորոգումների իրագործումը: Սակայն թուրքական կառավարությունը, ծանոթանալով ռուսական առաջարկներին, հայտարարեց, որ դրանք իր համար «ամբողջովին անընդունելի են»[13]: Ռուսական դիվանագիտության համար պարզ դարձավ, որ երիտթուրքական կառավարությունն առանց վճռական ներգործությունների չի ընդունի հայկական բարենորոգումները: 1913 թ. դեկտեմբերի 9-ին նախարարների խորհրդի նախագահ Վ. Կոկովցովին ուղղված նամակում Ս. Սազոնովը գրում էր, որ ռուսական դիվանագիտությունը հայկական բարենորոգումների հարցում բոլոր հնարավոր զիջումներն արդեն արել է, իսկ երիտթուրքերը շարունակում են համառել: Արտգործնախարարը գտնում էր, որ ժամանակը հասել է կիրառելու ռազմական բնույթի որոշ միջոցառումներ, ինչպիսին կովկասյան սահմաններում ռազմական խոշոր ուժերի կենտրոնացումն է: «Միայն այն վստահությամբ,- նշում էր Ս. Սազոնովը,- որ անհրաժեշտ պահին մենք տնօրինելու ենք բավականաչափ ուժի, որպեսզի պնդենք մեր պահանջները, մենք կարող ենք, երբ հարկ լինի, ընտրել Բ. Դռանը ներկայացնելու այնպիսի ձև, որը կասկած չի թողնի, որ հրաժարվելուց հետո նա կարող է սպասել մեր անմիջական գործողություններին»[14]:

Միջազգային աղմուկ չբարձրացնելու և հայկական շրջաններում ավելորդ ոգևորության տեղիք չտալու համար կովկասյան սահմաններում ռազմական ուժերի կենտրոնացումը ռուսական կառավարությունը կատարեց գաղտնի պայմաններում: Ռազմական նկատառումներից ելնելով՝ 1913 թ. աշնանը ռուսական կառավարությունն սկսեց Արևելյան Հայաստանից դեպի սահմանային շրջաններ ձգվող խճուղային նոր ճանապարհների կառուցման լայնածավալ աշխատանքներ[15]: Միաժամանակ, 1913 թ. դեկտեմբերից ռուսական կառավարող շրջանները մեղմացրին Արևմտյան

---

[11] *Реформы в Армении, с. 133.*
[12] Նույն տեղում, էջ 104:
[13] *АВПРИ, ф. Политархив 1913, оп. 482, д. 3465, л. 41.*
[14] Նույն տեղում, *Պ. 3464, и. 104.*
[15] ՀԱԱ, ֆ. 136, ց. 1, գ. 146, թ. 7:

Հայաստան հայ կամավորների անցման, ինչպես նաև զենքի ու զինամթերքի տեղափոխման արգելքները[16]: Ռազմական բնույթի միջոցառումներին զուգընթաց, ռուսական կառավարությունն անմիջականորեն աջակցեց Բ. Դռան վրա ֆինանսական ճնշում գործադրելու Եվրոպայի հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի առաջարկի իրականացմանը: Բանն այն է, որ բալկանյան պատերազմներից հետո թուրքական կառավարությունը կանգնել էր ֆինանսական փակուղու առաջ և նոր փոխառություններ կնքելու հույսով Եվրոպա էր գործուղել ֆինանսների նախարար Ջավիդ բեյին: Այդ ժամանակ եվրոպական երկրներից հիմնականում Ֆրանսիան կարող էր ընդառաջել թուրքական կառավարությանը: Պողոս Նուբար փաշան ցանկանում էր առիթից օգտվել և ֆրանսիական կառավարող շրջաններին համոզել հրաժարվելու Բ. Դռանը ֆինանսական փոխառություններ տրամադրելուց՝ քանի դեռ վերջինս չէր ընդունել հայկական բարենորոգումների նախագիծը: Այս կապակցությամբ Պողոս Նուբարը հոկտեմբերի կեսին բանակցում էր Փարիզ ժամանած Սազոնովի և Ֆրանսիայի արտգործնախարար Պինոնի հետ: Ի վերջո, Եվրոպայի հայ ազգային պատվիրակության ջանքերը պսակվեցին հաջողությամբ: Ֆրանսիական կառավարող շրջաններն առժամանակ հետաձգեցին երիտթուրքական կառավարությանը ֆինանսական նոր փոխառությունների տրամադրումը[17]:

Անցել էր ավելի քան մեկ տարի, ինչ Հայկական հարցը կրկին գտնվում էր միջազգային դիվանագիտության սեղանին: Այդ ընթացքում ռուսական դիվանագիտությունը Հայկական հարցում դեռևս շոշափելի հաջողությունների չէր հասել: Ռուս-թուրքական բանակցությունների հետագա ձգձգումը կարող էր այն տպավորությունը թողնել, թե ռուսական դիվանագիտությունն ուղղակի անկարող է հայերի համար որևէ բան անել:

Հայկական բարենորոգումների համար համաշխարհային պատերազմ սկսելը չէր մտնում ցարիզմի ծրագրերի մեջ: Կովկասյան սահմաններում ռազմական միջոցառումների իրագործումը կատարվեց ավելի շուտ տպավորություն թողնելու համար և հեռու էր իրականություն դառնալուց: Իսկ Ֆրանսիայի գործադրած ֆինանսական ճնշումը թուրքական կառավարության վրա ժամանակավոր ու սահմանափակ էր: Ֆրանսիական բանկային մագնատները չափազանց շահագրգռված էին երիտթուրքերին նոր փոխառություններ տրամադրելու մեջ, քանի որ դրանք մեծ շահույթներ էին խոստանում: Հետևաբար, ռազմական սպառնալիքների ու ֆինանսական ճմշման ժամկետը կարճատև էր, իսկ ներգործության ուժը՝ անկայուն: Ռուսական դիվանագիտության առջև խնդիր էր ծառացել շուտափույթ օգտվել ստեղծված բարեպատեհ իրադրությունից և սեղմ ժամկետում, փոխզիջումների գնով, ավարտել հայկական բարենորոգումների համար դիվանագիտական պայքարը[18]:

Բանակցությունների շուտափույթ ավարտին էին ձգտում և հայ հասարակական-քաղաքական շրջանները: Նրանք գտնում էին, որ և՛ ռազմա-

---

[16] *АВПРИ, ф. Политархив 1913, оп. 482, д. 3465, л. 54.*
[17] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 67:
[18] Նույն տեղում, գ. 58, թ. 2:

կան սպառնալիքները, և՛ ֆինանսական ճնշումը ժամանակավոր բնույթ են կրում, ուստի իրադրությունը կարող է արագորեն փոխվել, իսկ այդ դեպքում իրենք կկորցնեն ծրագրի մի քանի կետերի վերաբերյալ արդեն ձեռք բերված համաձայնությունը: 1914 թ. հունվարի 6-ին Զավեն պատրիարքը Կ. Պոլսի ռուսական գործերի հավատարմատար Կ. Գուլկևիչի հետ հանդիպման ժամանակ, հաշվի առնելով Օսմանյան կայսրության քաղաքական տագնապալի մթնոլորտը (աստիճանաբար ուժեղանում էր առավել ագրեսիվ, հակահայկական տրամադրություն ունեցող Թալեաթ, Էնվեր և Ջեմալ փաշաների ազդեցությունը, ուստի և անսպասելի շրջադարձերի հնարավորությունը), խորհուրդ էր տալիս բավարարվել ձեռք բերածով և արագացնել համաձայնագրի կնքումը[19]:

Այսպիսով, ռուս-թուրքական բանակցությունների ձգձգումը դարձել էր վտանգավոր: Ուստի ռուսական դիվանագիտությունը շտապեց փոխզիջումների գնով երիտթուրքական կառավարության հետ համաձայնության եզրեր գտնել ծրագրի մնացած կետերի վերաբերյալ: Եվ ահա,1914 թ. հունվարի 26-ին ռուսական հավատարմատար Կ. Գուլկևիչը (դեսպան Գիրսը արձակուրդում էր) և Օսմանյան կայսրության մեծ վեզիր, արտգործնախարար Սայիդ Հալիմ փաշան ստորագրեցին հայկական բարենորոգումների ռուս-թուրքական համաձայնագիրը, որով Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու սեկտորների, որոնցից առաջինը ներառում էր Էրզրումի, Տրապիզոնի և Սվազի, իսկ երկրորդը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները: Սեկտորներից յուրաքանչյուրի գլուխ կանգնելու էին օտարերկրացի գլխավոր տեսուչներ, որոնց իրավունք էր տրված հսկել իրենց ենթակա տարածքների վարչական ապարատի,արդարադատության,ոստիկանության և ժանդարմերիայի աշխատանքները: Գլխավոր տեսչի պահանջով, անհրաժեշտության դեպքում, նրա տրամադրության տակ էին դրվելու նաև սեկտորի զինված ուժերը: Գլխավոր տեսուչներն իրավասու էին հեռացնել կամ նշանակել սեկտորների բոլոր ցածրաստիճան պաշտոնյաներին: Ինչ վերաբերում էր բարձրաստիճան պաշտոնյաներին, ապա գլխավոր տեսուչները, թեև կարող էին նրանց ևս պաշտոնազրկել, սակայն նորերին նշանակելու համար պետք է բավարարվեին թուրքական կառավարությանն այդ մասին առաջարկություն անելով միայն: Այդ դրույթը չէր տարածվում վալիների վրա, որոնց հեռացման կամ նշանակման մասին գլխավոր տեսուչները պարտավոր էին հեռագրով տեղեկացնել ներքին գործերի նախարարությանը, իսկ վերջինս էլ՝ նախարարների խորհրդին: Թուրքական կառավարությունը գլխավոր տեսչի ահազանգից հետո, չորս օրվա ընթացքում, պարտավոր էր համապատասխան որոշում կայացնել:

Սեկտորների հողային հարցերը վճռվում էին գլխավոր տեսուչների անմիջական հսկողությամբ:

Համաձայնագիրը նախատեսում էր գլխավոր տեսուչներին նշանակել 10 տարի ժամկետով: Եթե այդ ընթացքում նրանց պաշտոնը թափուր մնար, ապա, ինչպես համաձայնագրում էր ասված. «Բ. Դուռը նրանց ընտրության հարցում իր հույսը դնում էր մեծ տերությունների բարեհաճ

[19] *АВПРИ, ф. Политархив 1914, оп. 482, д. 3472, л. 14.*

աջակցության վրա»[20]: Երիտթուրքական կառավարությունը պարտավորվում էր տեսուչների հետ միասին մշակել նրանց իրավունքներին ու պարտականություններին առնչվող ավելի մանրամասն հրահանգներ: Բոլոր օրենքները, հրովարտակները և կառավարական հաղորդագրությունները հրատարակվելու էին տեղական լեզուներով: Դատարաններում ու վարչական հիմնարկություններում յուրաքանչյուր ոք իրավունք ուներ հանդես գալ իր մայրենի լեզվով: Դատարաններում դատավճիռները կազմվելու էին թուրքերեն և թարգմանվելու էին կողմերի լեզուներով: Յուրաքանչյուր ազգություն իրավունք էր ստանում իր միջոցներով հիմնել սեփական դպրոցներ ու հոգալ նրանց ծախսերը:

Խաղաղ պայմաններում յուրաքանչյուր օսմանահպատակ իր զինվորա-կան ծառայությունը կատարելու էր այնտեղ, որտեղ ապրում էր՝ բացա-ռությամբ ռազմածովային ուժեր զորակոչվողներից: Համիդիե գնդերը փոխվելու էին պահեստի հեծելազորի: Նրանց զինվորական ծառայությունը սահմանափակվում էր մեկ տարով: Խաղաղ ժամանակ նրանք զրկվում էին զենք կրելու իրավունքից: Այդ հեծելազորի հրամանատարները նշանակվելու էին թուրքական բանակի սպաներից: Սեկտորի յուրաքանչյուր բնակիչ, առանց ազգության ու կրոնի խտրության, կարող էր զինվորական ծառայությունը կատարել այդ զորամասում:

Վիլայեթների գլխավոր խորհուրդների իրավասությունները որոշվելու էին 1913 թ. մայիսի 13-ի «Վիլայեթների կառավարման ժամանակավոր օրենքի» սահմաններում: Վանի և Բիթլիսի գլխավոր խորհուրդները (մեջլիսի-ումումի) կազմվելու էին հավասար թվով մահմեդականներից և ոչ մահմեդականներից: Հավասարության սկզբունքը պահպանվում էր նաև Էրզրումի վիլայեթում, սակայն միայն մեկ տարվա համար՝ մինչև ազգությունների համաչափությունը որոշող մարդահամարի անցկացումը: Մյուս բոլոր վիլայեթների գլխավոր խորհուրդների անդամներն ընտրվում էին համեմատականու-թյան սկզբունքով: Մահմեդական ընտրողների թիվը որոշվելու էր ըստ վերջին ընտրու-թյունների ցուցակների, իսկ ոչ մահմեդականներինը՝ համապատասխան համայնքների ներկայացրածներով: Գլխավոր տեսուչներին կից ստեղծվող վարչական խորհուրդները կազմվելու էին հավասար թվով մահմեդականներից և ոչ մահմեդականներից: Հավասա-րության սկզբունքը պահպանվում էր նաև սեկտորների ոստիկանության և ժանդարմե-րիայի, ինչպես նաև մյուս բոլոր պաշտոնյաների նշանակման ժամանակ[21]:

Հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը խիստ զիջում էր ռուսական նախագծին: Մեկ միասնական նահանգը, որը ռուսական նախագծի առանցքային պահանջներից էր, տրոհվում էր երկու սեկտորների: Ընդ որում, սեկտորներից ոչ միայն չէին առանձնացվում այն մահմեդական շրջանները, որոնք արհեստականորեն կցվել էին հայկական շրջաններին, այլև ավելանում էր մահմեդական հոծ բնակչություն ունեցող Տրապիզոնի վիլայեթը: Վերջինս ուներ մեկ միլիոն հարյուր հազար բնա-

---

[20] *Реформы в Армении, с. 160.*

[21] Նույն տեղում, էջ 158-165, *Сборник договоров России... 1856-1917, М., 1952, с. 421-424.*

կչություն, որից 915 հազարը մահմեդականներ էին[22]: Ակներև էր, որ յոթերորդ վիլայեթի կցումն ուներ արևմտահայությանը մահմեդականության մեջ տարրալուծելու միտումներ:

Համաձայնագրի տեքստն այնպես էր ձևակերպված, որ բարենորոգումների իրագործումը մեծապես կախված էր գլխավոր տեսուչների անձնական կարողություններից և այն հարաբերություններից, որոնք աշխատանքի ընթացքում հաստատվելու էին նրանց և թուրքական կառավարության միջև[23]: Համաձայնագիրը չէր պատասխանում այն կարևոր հարցին, թե արդյո՞ք երիտթուրքական կառավարությունն իրավունք ունի առանց մեծ տերությունների համաձայնության փոխել անցանկալի տեսուչներին[24]: Համաձայնագիրը չէր նախատեսում գլխավոր տեսուչների նստավայրերը, որոնք պետք է որոշվեին նրանց և թուրքական կառավարության միջև կայանալիք մասնավոր համաձայնությամբ[25]:

Թեև հունվարի 26-ի համաձայնագիրը գլխավոր տեսուչներին էր վերապահում իրենց ենթակա սեկտորներում հողային վեճեր լուծելու իրավունքը, սակայն ոչինչ չէր ասում, թե կոնկրետ ի՞նչ միջոցներով և ուղիներով էր լուծվելու արևմտահայերի համար կենսական նշանակություն ունեցող այդ խնդիրը: Ոչինչ չէր ասվում նաև արևմտահայոց 1863 թ. Ազգային սահմանադրության պահպանման, Օսմանյան կայսրության այլ շրջաններում բնակվող հայերի դրության բարելավման, Արևմտյան Հայաստանում մուհաջիրների (Եվրոպայից գաղթող մահմեդականներ) վերաբնակեցումը արգելելու, քուրդ ավազանու ազդեցության տակ գտնվող քոչվորներին ընտրական իրավունքից զրկելու մասին:

Ռուսական նախագծի համեմատությամբ լուրջ նահանջ էին համաձայնագրի այն դրույթները, որոնք վերաբերում էին գլխավոր խորհուրդների կազմին ու իրավասություններին: Եթե ռուսական նախագիծը բոլոր վիլայեթների գլխավոր խորհուրդների համար սահմանում էր հավասար ներկայացուցչական սկզբունք, ապա համաձայնագիրը նախատեսում էր այն կիրառել միայն Վանում ու Բիթլիսում: Էրզրումի վիլայեթի համար հավասար ներկայացուցչության սկզբունքն ընդունվում էր միայն առաջին տարվա համար, որի ընթացքում պետք է ավարտվեր մարդահամարը: Մեկ տարին շատ քիչ էր, որպեսզի արտերկիր գաղթած արևմտահայերը համոզվեին իրենց հայրենիքում ստեղծված բարվոք վարչակարգի ամրության մեջ և վերադառնային հայրենիք, այնինչ երիտթուրքական կառավարությունը մուհաջիրների վերաբնակեցմամբ կարող էր վիլայեթում ստեղծել մահմեդականության թվական մեծամասնություն: Զուր անցան ռուսական դիվանագիտության բոլոր ջանքերը՝ մարդահամարը մինչև հինգ տարի ժամկետով հետաձգելու համար: Երիտթուրքական կառավարությունը համառորեն ձգտում էր օգտվել արևմտահայության բնաջնջման բազմամյա քաղաքականության պտուղներից[26]:

---

[22] *АВПРИ, ф. Политархив 1909 -1912, д. 3459, л. 46.*
[23] *Баку, 14. II.1914.*
[24] *Русское слово, 30. I.1914.*
[25] *АВПРИ, ф. Канцелярия МИД, оп. 470, д. 56, л. 137.*
[26] Նույն տեղում, *ф. Политархив 1914, оп.482, д. 3472, л. 50 – 51.*

Ինչ վերաբերում է գլխավոր խորհուրդների իրավասություններին, ապա դրանք նշանակալիորեն զիջում էին ռուսական նախագծի պահանջներին: Գլխավոր խորհուրդների իրավասությունները սահմանափակվում էին թուրքական գործող օրենսդրությամբ: Ուստի, նրանք սեկտորների ղեկավարման աշխատանքներում ունենալու էին ավելի քիչ իրավունքներ, քան, ասենք, Ռուսաստանի զեմստվոները:

Համաձայնագրում ոչ մի տեղ հիշատակված չէին հայ, հայոց լեզու, Հայաստան անվանումները: Դրանք փոխարինված էին ոչ մահմեդական, տեղական լեզուներ, Արևելյան Անատոլիա բառերով: Տպավորությունն այն էր, կարծես բարենորոգումները ոչ մի կապ չունեին արևմտահայության հետ: Արևմտյան Հայաստանն առաջվա նման թուրքական կառավարության համար շարունակում էր մնալ որպես աշխարհագրական տերմին: Նա հետևողականորեն շարունակում էր բարենորոգումների հայկական դրոշմը վերացնելու և նրանց ընդհանուր բարեկարգության բնույթ հաղորդելու քաղաքականությունը[27]:

Վերոհիշյալ թերություններով հանդերձ, հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը պարունակում էր այնպիսի կարևոր դրույթներ, որոնց իրագործումը զգալիորեն կթեթևացներ արևմտահայության տնտեսական ու քաղաքական իրավազուրկ կացությունը: Համաձայնագրի իրագործման հետևանքով Արևմտյան Հայաստանի կառավարչաձևը նմանվելու էր Լիբանանի 1861 թ. «Օրգանական ստատուտին»: Տարբերությունն այն էր, որ Լիբանանի նահանգապետը օսմանահպատակ էր, իսկ Արևմտյան Հայաստանի գլխավոր տեսուչները՝ եվրոպացիներ: Ինչ վերաբերում է եվրոպական վերահսկողությանը, ապա պետք է նկատել, որ հունվարի 26-ի համաձայնագիրը մի քայլ առաջ էր 1878 թ. Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի համեմատությամբ: Ռուս-թուրքական համաձայնագիրը շարադրում էր անգամ այն վերջնագրի տեքստը, որով թուրքական կառավարությունը պարտավորվում էր դիմել տերություններին՝ խնդրելով երկու սեկտորների համար տալ գլխավոր տեսուչների թեկնածուներ: Համաձայնագիրը նախատեսում էր հսկողությունն իրականացնել Եվրոպայի դրածոների՝ գլխավոր տեսուչների միջոցով, իսկ Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածը սահմանափակվում էր մեծ տերություններին բարենորոգումների գործադրման մասին Բ. Դռան կողմից ուղարկվող պարբերական հաղորդումներով: Բացի այդ, ըստ հունվարի 26-ի համաձայնագրի, վերահսկողությունն իրեն զգացնել էր տալու նաև տերությունների և, առաջին հերթին, Ռուսաստանի տեղական հյուպատոսների միջոցով, որոնց հետ եվրոպացի տեսուչները գտնվելու էին մշտական փոխհարաբերությունների մեջ: Եվրոպական վերահսկողությունն իրականացնելիս անընդհատ զգացվելու էր Ռուսաստանի առաջնակարգ դերը, որովհետև Բ. Դուռը, համաձայնագիր կնքելով ռուսական կառավարության հետ, նրա առաջ պարտավորվում էր իրագործել բարենորոգումները: Այս առումով էլ հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրն ընդհուպ մոտենում էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածին:

---

[27] **Իզմիրլյան Կ.,** Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս, Բեյրութ, 1964, էջ 161-162:

Դատելով այն բանից, որ եվրոպացի տեսուչները հսկելու էին սեկտորների վարչական ու դատական աշխատանքները, ինչպես նաև իրավունք ունեին պաշտոնազրկել բոլոր աստիճանավորներին (բացառությամբ վալիների) և նորերին նշանակել (բացառությամբ բարձրաստիճան պաշտոնյաների, որոնց համար կարող էին Բ. Դռանը ներկայացնել իրենց թեկնածուների ցուցակը), հետևաբար նրանք հանդես էին գալու որպես ոչ միայն լոկ հսկողներ, այլև իրական կառավարիչներ: Առանձին դեպքերում եվրոպացի տեսուչները հանդես էին գալու նաև որպես սեկտորների զինված ուժերի հրամանատարներ, որովհետև, ըստ համաձայնագրի, հասարակական անդորր պահպանելու ժամանակ նրանք իրավունք ունեին ժանդարմերիայի ու ոստիկանության հետ միասին գործի դնել և ռազմական ուժերը: Տեսուչների վերոհիշյալ բացառիկ իրավունքները ոչ միայն բարձրացնում էին նրանց իշխանության հեղինակությունը, այլև առավել արդյունավետ էին դարձնում զանազան ավազակախմբերի դեմ մղվող պայքարը և, ի վերջո, կարող էին զգալիորեն նպաստել արևմտահայության անապահով կացության բարելավմանը:

Համաձայնագրի արմատական դրույթներից մեկը խաղաղ պայմաններում սեկտորների բնակիչների՝ իրենց բնակավայրերում զինվորական ծառայությունը կատարելու պահանջն էր, որը, որպես ինքնավար Հայաստան ստեղծելու քայլ, սկզբում մերժվել էր երիտթուրքերի կողմից: Այսպիսի պահանջ առաջադրված չէր նույնիսկ տերությունների 1895 թ. բարենորոգումների մայիսյան ծրագրում: Համաձայնագրի նորություններից էր նաև այն, որ արևմտահայերը իրավունք էին ստանում վարչական հիմնարկություններում ու դատարաններում հանդես գալու իրենց մայրենի լեզվով: Բոլոր օրենքները, հրովարտակները և պաշտոնական հաղորդագրությունները թուրքերենի հետ միաժամանակ հրապարակվելու էին և հայերեն: Կարևոր նշանակություն ուներ նաև այն հանգամանքը, որ վիլայեթների բյուջեի այն մասը, որն արևմտահայերը հատկացնելու էին ուսումնական ծախսերի համար, հանձնվելու էր միայն իրենց տնօրինությանը: Ինչպես հայտնի է, մինչ համաձայնագրի կնքելը թուրքական կառավարությունն այդ գումարները տրամադրում էր միմիայն թուրքական դպրոցներին: Վերոհիշյալ պահանջները ևս առաջադրված չէին ոչ 1895 թ. մայիսյան ծրագրում և ոչ էլ 1895 թ. հոկտեմբերի 20-ի սուլթանական հրովարտակում[28]:

Համաձայնագրի թերևս ամենակարևոր հոդվածներից մեկը սեկտորների պաշտոնեության մեջ մահմեդականների և քրիստոնյաների հավասարության պահանջն էր: Այս կետը ևս մի քայլ առաջ էր հոկտեմբերի 20-ի հրովարտակից, որը պաշտոնների բաշխման ժամանակ առաջնորդվում էր համեմատական ներկայացուցչության սկզբունքներով: Փաստորեն, մահմեդականների հետ միասին արևմտահայերը իրավունք էին ստանում մասնակցել սեկտորների ղեկավարման աշխատանքներին: Խոսքը վերաբերում էր ոչ միայն ոստիկանությանն ու ժանդարմերիային, այլև մնացած բոլոր պաշտոններին:

[28] *Реформы в Армении, с. 171-173.*

1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի վերոհիշյալ առավելությունները հիմք են տալիս պնդելու, որ իրագործման դեպքում այն կարող էր զգալիորեն բավարարել արևմտահայության կյանքի տարրական պահանջները: Սուլթանական ու երիտթուրքական կառավարող շրջանների քաղաքականության հետևանքով արևմտահայ ժողովրդի գոյավիճակն այնքան օրհասական էր դարձել, որ չնչին բարենորոգումներն անգամ ցանկալի ու խրախուսելի էին: Համաձայնագիրը հայկական բարենորոգումների համար ծավալված դիվանագիտական պայքարի փոխզիջումային տարբերակ էր: Ռուսական դիվանագիտությունը ճիշտ կռահեց, որ հայկական բարենորոգումների իրագործման մեխը եվրոպական վերահսկողությունն է: Դրա բացակայությունը 1878 թ. Բեռլինի վեհաժողովից ի վեր թուրքական կառավարող շրջաններին հնարավորություն էր տվել խուսափել հայկական բարենորոգումների կիրառումից: Անչափ կարևոր էր, որ հունվարի 26-ի համաձայնագրով նախատեսված եվրոպական վերահսկողությունում առաջնահերթ դեր էր խաղալու Ռուսաստանը: Եվ իրոք, համաձայնագրի ստորագրումից ընդամենը երեք օր անց երիտթուրքական կառավարությունը դիմեց տերություններին՝ յուրաքանչյուրից խնդրելով առաջարկել գլխավոր տեսուչների երկուական թեկնածու: Ռուսական դիվանագիտությունը հույս ուներ համաձայնագրի գործադրմամբ հաստատվող նոր կառավարչաձևի օգնությամբ սահմանակից հայկական սեկտորների հետ ավելի ընդլայնել ու խորացնել առևտրատնտեսական հարաբերությունները, որոնք ռուսական ազդեցության հետագա տարածման լավագույն գրավականներն էին[29]: 1914 թ. մայիսի 10-ին 4-րդ պետական դումայում Ս. Սազոնովն ասում էր. «Կապված նոր պայմանների հետ, որոնցում ձևավորվում են ռուս-թուրքական հարաբերությունները, մենք հույս ունենք ամրապնդել Ռուսաստանի և հարևան թուրքական շրջանների հետ արդեն գոյություն ունեցող տնտեսական կապերը և աշխուժացնել մեր ու Թուրքիայի միջև առևտրական հարաբերությունները»[30]: Ռուսական դիվանագիտությունը համաձայնագիրը դիտում էր որպես մերձավորարևելյան հարցերում իր միջազգային բարձր հեղինակության ապացույց, որովհետև Օսմանյան կայսրությունը Ռուսաստանի առաջ պարտավորվում էր հայկական բարենորոգումների վերաբերյալ ստույգ բովանդակություն ունեցող հատուկ հուշագրով դիմել տերություններին: Դա փաստում էր Հայկական հարցում Ռուսաստանի ունեցած ղեկավար դերը[31]:

Այսպիսով, հունվարի 26-ի համաձայնագրի կնքումով ռուսական կառավարությունը հասավ իր գլխավոր նպատակներից մեկին. նա փոքրասիական հարցերում մեծապես ամրապնդեց իր հեղինակությունն ու ազդեցությունը: Համաձայնագրի ստորագրումը Առաջին համաշխարհա-

---

[29] *Международные отношения в эпоху империализма, серия III, т. I, М., 1935, с. 157.*
[30] *Россия. Государственная Дума. Стенографические отчеты 1914 г. Четвертый созыв, с. 340-341.*
[31] *Реформы в Армении, с. 173.*

յին պատերազմի նախօրյակին նրան վերապահեց Հայկական հարցի պաշտոնական հովանավորի և հայկական հողերի «օրինական» ժառանգորդի դերը: Համաձայնագիրը ոչ միայն ռուսական դիվանագիտության, այլև արևմտահայության հաղթանակն էր, քանի որ զգալի երաշխիքներ էր տալիս արևմտահայ ժողովրդի կյանքի, պատվի ու ինչքի ապահովության համար:

ВОПРОС ЕВРОПЕЙСКОГО КОНТРОЛЯ В РУССКО-ТУРЕЦКОМ СОГЛАШЕНИИ ОТ 26-ГО ЯНВАРЯ 1914 Г.

МАРТИРОСЯН М. Е.

Резюме

После сложной дипломатической борьбы 26-го января 1914 г. в Константинополе было подписано русско-турецкое соглашение по вопросу об армянских реформах.

Для России важным пунктом этих реформ был контроль со сто-роны европейских стран, ибо в случае отсутствия этого контроля реформы были обречены на провал. Согласно подписанному соглашению, в европейском контроле главная роль отводилась России, поскольку Османская империя обязалась перед Россией претворить эти реформы в жизнь. Контроль должен был осущест-вляться усилиями европейских генеральных инспекторов.